

Կոռուպցիայի ընկալման 2021թ. համաթիվը ցույց է տալիս կոռուպցիայի մակարդակների լճացած վիճակը վերջին տասնամյակում մարդու իրավունքների խախտումների և ժողովրդավարության նահանջի համայնապատկերում

Աշխարհի 27 երկրներ գտնվում են իրենց պատմական նվազագույնի մակարդակում

Բեռլին, հունվարի 25, 2022 – 2021 թվականի Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ), որն այսօր հրապարակվեց Թրանսփարենսի Ինթերնեշնլի կողմից, ցույց է տալիս, որ կոռուպցիայի մակարդակները ողջ աշխարհով մեկ մնացել են անփոփոխ և վերջին 10 տարիներին երկրների 86 տոկոսը չի գրանցել ոչ մի առաջընթաց կամ, եթե գրանցել է, ապա՝ շատ փոքր:

Թրանսփարենսի Ինթերնեշնլի ԿԸՀ արդյունքները վեր է հանել այն օրինաչափությունը, որ այն երկրները, որոնցում խախտվում են քաղաքացիական իրավունքները, հետևողականորեն գրանցում են ԿԸՀ-ն ավելի ցածր արժեքներ: Ինքնագոհությունը կոռուպցիայի դեմ պայքարում ավելի մեծածավալ է դարձնում մարդու իրավունքների խախտումները և խարխլում ժողովրդավարությունը՝ առաջ բերելով արատավոր շրջան: Իրավունքների և ազատությունների ոլորտում նահանջը և ժողովրդավարության անկումը բերում են ավտորիտարիզմի, որն էլ իր հերթին նպաստում է կոռուպցիայի էլ ավելի բարձր մակարդակների հաստատմանը:

«Կոռուպցիայի դեմ պայքարում մարդու իրավունքների նկատմամբ «վատ չէր լինի, որ հարգվեին» մոտեցումն ուղղակի սխալ է: Ավտորիտար մոտեցումները ոչնչացնում են անկախ զսպումները և հակակշիռները, և ջանքերը կոռուպցիայի դեմ պայքարում

կախման մեջ են դնում վերնախավերի քմահաճույքից: Ազատ խոսքի և իշխանություններին հաշվետու դարձնելուն ուղղված քաղաքացիների համատեղ ջանքերի ապահովումը դեպի կոռուպցիայից ազատ հասարակություն տանող միակ մնայուն ճանապարհն է:» - նշում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի Նախագահ տիկին Դելիա Ֆերեյրա Ռուբին:

2021 թվականի ընդհանուր պատկերը

2021 թվականի ԿԸՅ-ն 0-ից (խիստ կոռումպացված) 100 (շատ մաքուր) սանդղակով դասակարգում է 180 պետությունները և տարածքներն ըստ նրանցում **հանրային ոլորտում առկա կոռուպցիայի** մակարդակների ընկալման:

Տասներորդ տարին անընդմեջ ԿԸՅ համաշխարհային միջինը մնում է անփոփոխ՝ հավասար 43-ի, և երկրների երկու երրորդի ԿԸՅ արժեքները 50-ից ցածր են:

- Համաթվի դասակարգման աղյուսակը 88-ական միավորով գլխավորում են **Դանիան, Ֆինլանդիան և Նոր Զելանդիան**, որոնք նաև **Ժողովրդավարության համաթվի** քաղաքացիական ազատությունների ամենաբարձր միավոր ունեցող 10 տոկոս երկրների շարքում են:
- **Սոմալին** (13 միավոր), **Սիրիան** (13 միավոր) և **Հարավային Սուդանը** (11 միավոր) եզրափակում են ԿԸՅ դասակարգման աղյուսակը: Սիրիան **Ժողովրդավարության համաթվի** քաղաքացիական ազատությունների դասակարգման աղյուսակում զբաղեցնում է վերջին տեղը (Սոմալին և Հարավային Սուդանը այդ աղյուսակում ընդգրկված չեն):
- 27 երկրների, որոնց թվում **Կիպրոսը** (53 միավոր), **Լիբանանը** (24 միավոր) և **Հոնդուրասը** (23 միավոր) 2021 թվականի ԿԸՅ-ները գրանցել են այդ երկրների պատմական նվազագույն արժեքները:

Անցած տասնամյակի ընթացքում 154 երկրների ԿԸՅ արժեքները կամ նվազել են կամ չեն գրանցել զգալի առաջընթաց:

- 2012 թվականի համեմատ, 23 երկրներում արձանագրվել է ԿԸՅ զգալի նահանջ, ներառյալ այնպիսի զարգացած երկրներ, ինչպիսիք են **Ավստրալիան** (73

միավոր), **Կանադան** (74 միավոր) և **ԱՄՆ-ն** (67 միավոր): Վերջինս առաջին անգամ դուրս է մնացել աշխարհի ամենաբարձր ԿԸՀ ունեցող 25 երկրների ցանկից:

- 25 երկրներ էապես բարելավել են իրենց ԿԸՀ-ն, ներառյալ **Էստոնիան** (74 միավոր), **Սեյշելյան կղզիները** (70 միավոր) և **ՀԱՅԱՍՏԱՆԸ** (49 միավոր):

Յուրաքանչյուր երկրի ԿԸՀ արժեքը և դրա փոփոխությունները, ինչպես նաև յուրաքանչյուր տարածաշրջանի համար վերլուծությունը տե՛ս 2021 ԿԸՀ էջը:

Կոռուպցիան, մարդու իրավունքները և ժողովրդավարությունը

Կոռուպցիայի դեմ պայքարի թուլացման և լճացման պայմաններում, մարդու իրավունքները և ժողովրդավարությունը հարվածի տակ են: Եվ դա պատահական համընկնում չէ: Կառավարությունների կողմից մարդու իրավունքների և ժողովրդավարության իրավիճակն էլ ավելի վատթարացնելու նպատակով COVID-19-ի համավարակի շարունակական չարաշահումն ապագայում ողջ աշխարհում կարող է բերել կոռուպցիայի իրավիճակի էլ ավելի կտրուկ վատթարացման:

2012 թվականի համեմատ ԿԸՀ նշանակալի անկում արձանագրած 23 երկրներից 19-ը նահանջ են արձանագրել նաև քաղաքացիական իրավունքների իրենց համաթվերում:

Ավելին, 2020 թվականին կատարված իրավապաշտպան ակտիվիստների սպանության 331 փաստագրված դեպքերի (տե՛ս https://www.frontlinedefenders.org/sites/default/files/fl_d_global_analysis_2020.pdf) 98

տոկոսը տեղի է ունեցել այն երկրներում, որոնց ԿԸՀ արժեքը 45-ից ցածր էր:

- **Ֆիլիպինների** ԿԸՀ-ն շարունակեց 2014 թվականից սկսված իր անկումը՝ 2021 թվականին իջնելով մինչև 33-ի: Միաժամանակ 2016 թվականին երկրի նախագահ ընտրված Ռոդրիգո Դուտերտեն շարունակում էր ճնշել միավորվելու ազատությունը և խոսքի ազատությունը: Այս երկիրն ունի նաև իրավապաշտպան ակտիվիստների սպանությունների բացառիկ բարձր ցուցանիշ՝ 2020 թվականին այնտեղ սպանվել է 20 ակտիվիստ:

- **Վենեսուելայում** նախագահ Նիկոլաս Մադուրոյի իշխանությունը ճնշում էր քաղաքական այլախոհներին, լրագրողներին և Նույնիսկ առողջապահության ոլորտի աշխատողներին: Այս երկրի ԿԸՀ-ն վերջին տասնամյակի ընթացքում էապես նվազել է՝ 2021 թվականին իջնելով իր նվազագույն արժեքին (14 միավոր):
- **Մալին** հայտնվել է քաղաքական, ինստիտուցիոնալ և անվտանգային ճգնաժամում՝ այդ թվում վերջին 10 տարիներին երկրում կատարված երեք ռազմական հեղաշրջումները: Նրա ԿԸՀ նվազել է՝ հասնելով 29 միավորի: Միաժամանակ, անկում է ապրում նաև Մալիի քաղաքացիական ազատությունների համաթիվը և շարունակվող ռազմական հակամարտությունը խարխլում է պետական կառավարման գործառույթները՝ հանգեցնելով կոռուպցիայի և մարդու իրավունքների խախտումների արատավոր շրջանի:
- Նույնիսկ ժողովրդավարական որոշ երկրներում վերջին տասնամյակում գրանցվել է նահանջ միաժամանակ կոռուպցիայի դեմ պայքարում և մարդու իրավունքների ոլորտում: **Լեհաստանի** քաղաքացիական ազատությունների համաթիվը նվազել է և միաժամանակ նվազել է նաև վերջինիս ԿԸՀ-ն՝ ընկնելով մինչև 56 միավորի այն պայմաններում, երբ իշխանությունները ճնշում են իրավապաշտպան ակտիվիստներին՝ կիրառելով վիրավորանքի մասին օրենքները և խստիվ սահմանափակելով մամուլի ազատությունը:

Թրանսփարենսի Ինթերնեշնլը կոչ է անում կառավարություններին հարգել իրենց հակակոռուպցիոն և մարդու իրավունքներին առնչվող պարտավորությունները և ողջ աշխարհի մարդկանց՝ միավորվել փոփոխությունների պահանջի շուրջ:

«Ավտորիտար համակարգերում, որոնցում կառավարությունը, գործարար ոլորտը և լրատվամիջոցները վերահսկվում են մի քանիսի կողմից, սոցիալական շարժումները մնում են իշխանության վրա հսկողության վերջին միջոցը: Հենց ուսուցիչների, խանութպանների, ուսանողների և այլ շարքային քաղաքացիների իշխանությունն է, որն ի վերջո կհանգեցնի իշխողների հաշվետվողականությանը:» - նշում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի գործադիր տնօրեն Դանիել Էրիկսոնը:

Կոռուպցիայի ընկալման համաթվի մասին

Սկսած 1995թ. իր առաջին հրապարակումից Կոռուպցիայի ընկալման համաթիվը, դարձավ հանրային ոլորտում կոռուպցիայի վերաբերյալ համաշխարհային առաջատար ցուցիչը: 2021 թվականի համաթիվը գնահատել է աշխարհի 180 երկրները և տարածքները՝ ելնելով հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալումից և օգտագործելով տվյալներ 13 արտաքին աղբյուրներից, որոնց թվում Չամաշխարհային Բանկը, Չամաշխարհային տնտեսական ֆորումը, ռիսկեր գնահատող և խորհրդատվական մասնավոր ընկերությունները, հետազոտական կենտրոնները և այլն: Գնահատականներն արտացոլում են փորձագետների և գործարարների ընկալումները:

ԿԸՀ-ի հաշվարկման գործընթացը կանոնավոր կերպով վերանայվում է (վերջին անգամ՝ 2017 թվականին Եվրոպական Հանձնաժողովի Համատեղ հետազոտական կենտրոնի կողմից)՝ համոզվելու համար, որ այն ունի հնարավորինս կուռ և համահունչ ներքին տրամաբանություն: 2012 թվականից այս կողմ ԿԸՀ յուրաքանչյուր տարվա գնահատականները համեմատելի են յուրաքանչյուր այլ տարվա գնահատականների հետ: Ավելի շատ տեղեկատվության համար՝ տե՛ս *ԿԸՀ այբուբենը. ինչպես է հաշվարկվում Կոռուպցիայի ընկալման համաթիվը* հոդվածը (<https://www.transparency.org/en/news/how-cpi-scores-are-calculated>):

Ծանոթագրություններ

- Վերջին 10 տարիներին նահանջ են ապրել հետևյալ երկրները. **ԱՄՆ, Ավստրալիա, Բոսնիա և Հերցեգովինա, Բոտսվանա, Գվատեմալա, Թուրքիա, Լեհաստան, Լիբանան, Լիբերիա, Լյուքսեմբուրգ, Կանադա, Կիպրոս, Հարավային Սուդան, Հոնդուրաս, Հունգարիա, Մալի, Մոնղոլիա, Նիկարագուա, Չիլի, Սենթ Լյուսիա, Սիրիա, Վենեսուելա և Ֆիլիպիններ:**
- Վերջին 10 տարիներին էական առաջընթաց են ունեցել հետևյալ երկրները. **Անգոլա, Ավստրիա, Աֆղանստան, Բելառուս, Գայանա, Եթովպիա, Էստոնիա, Թիմոր-Լեստե, Իտալիա, Լատվիա, Կոտ դ'Իվուար, ՀԱՅԱՍՏԱՆ, Հարավային Կորեա, Հունաստան, Մյանմա, Մոլդովա, Նեպալ, Չինաստան, Պարագվայ,**

Սեյշելյան կղզիներ, Սենեգալ, Վիետնամ, Տանզանիա, Ուգանդա և Ուկրաինա:

- Յետևյալ 27 երկրները 2021 թվականին գրանցեցին իրենց ամենացածր արդյունքը սկսած 2012 թվականից. **Ավստրալիա, Բելգիա, Բոտսվանա, Դոմինիկա, Էսվատինի, Թաիլանդ, Թուրքիա, Իսրայել, Լեհաստան, Լետտո, Լիբանան, Կանադա, Կիպրոս, Կոմորյան կղզիներ, Հարավային Սուդան, Հոնդուրաս, Հունգարիա, Մոնղոլիա, Նիգեր, Նիգերիա, Նիդերլանդներ, Նիկարագուա, Շվեյցարիա, Սերբիա, Սլովենիա, Վենեսուելա և Ֆիլիպիններ:**
- Լրացուցիչ վերլուծությունն հասանելի է այն երկրների համար, որոնք Թրանսպարենսի Ինթերնեշնլի կոդից ճանաչվել են որպես դիտարկելու համար կարևոր, ներառյալ **Քաթարը** (63 միավոր) և **Հնդկաստանը** (43 միավոր):
- Տվյալների ամբողջական բազան և մեթոդաբանությունը ներբեռնելի են:
- Տե՛ս նաև ԿԸՀ 2021 թվականի զեկույցը, որում ներառված են նաև Թրանսպարենսի Ինթերնեշնլի առաջարկությունները: